

Աղբիւրի յաւելուած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 43 կիրակի 9 նոյեմբերի | ութերորդ տարի 1897

ԲԱԺԻՆ Է 1898 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ



ՀԱՑԹԱ—ՓԻՐԱՏ

(Տասներեքերորդ դարի սկզբից մի անցք

(Շարունակութիւն *)

Կարծես մի ստւեր սահեցաւ Փիրատի երեսով. այլևայլութիւնն սքողել ջանալով լրջութեամբ ասաց.

—Շարունակիր, Էլիֆ, շարունակիր:

—Ծնողներս հարուստ էին, կարծեմ ունէինք շատ կալւածներ, ոչ մի բան չէր պակասում, նրանք դոհ էին իրանց կեանքից, բայց՝ երբեմն չիշելով իրանց որդու կորուստը, տրտմում էին և արտասւում, ես էլ մասնակցում էի նրանց առանց գիտենալու թէ ինչու կամ ում համար եմ լալիս: Իմ եղբայրը կորել էր. նա գնացած էր խաղալու, մի քանի հասակակիցներիլ հետ կորել, էլ չէր վերադարձել տուն, այժմ իմանում եմ՝ որ մարդորսները նրան բռնած, տարած են իբր գերի:

—Դու չես չիշում եղբօրդ անունը:

—Ո՛չ, ես դրանք չեմ չիշում, միայն չիշում եմ՝ որ եղբայրս կորած է եղել և նրա մասին միշտ խօսում էին ծնողքս:

—Լաւ, քո անցքը շարունակիր...

—Գարունը նոր էր բացւել, մենք հրճւանքով զբօսնում էինք մի վարար և մեծ գետի եզերքին, որ անցնում էր մեր քաղաքի միջով: Ես քաղում էի դեղատեսիլ ծաղիկներ, փնջեր կապում, հոտւրտելով զւարճանում: Մէկ էլ չանկարծ զբօսնող կանայք, տղամարդիկ իրար անցան,, հրմշտելով, միմեանց ոտի տակ գլորւելով սկսեցին դէպի քաղաք վազել:

—«Լէգէոնն.—աղաղակում էին միաբերան: Այդ միջոցին ես կորցրի ծնողներիս, լալով վազում էի բազմութեան ետևից: Մէկ էլ տեսնում մեր դէմն

*) Տես Տարազ № 42.

ելան Հարիւրաւոր սպառազէն մարդիկ. շրջապատեցին և սկսեցին բռնել, կոտորել: Ես բարձրաձայն լաց էի լինում. մի լեզգի գրկեց ինձ, ապտակելով լռեցրեց. ձիուն վրայ առնելով, տարաւ չըգիտեմ ուր: Ո՜հ, Փիրմատ, այդ սարսափելի օրերը դնան ու յետ չըգան... Ես չեմ յիշում որչափ ժամանակ լեզգու մօտ մնացի: Մի օր նա ինձ դաւակն առաջ՝ ճանապարհ ելաւ, մի քանի օր յետոյ բերեց Կարին: Նա ինձ վաճառեց մի ծերունի փաշայի, այնուհետև նրա ձեռի տակ մեծացայ: Խալիլ փաշան,—այսպէս էր այս մեր տանը տէր, իմ բարերար և հայր ծերունու անունը,—ինձ դաստիարակեց անձամբ սովորեցնելով ինչ որ գիտեմ: Իբրև իր դուստրը նա լաւ էր պահում ինձ, վասնորոյ ես մոռացայ ծնողներիս յիշատակը, մոռացայ ամեն ինչ. քեզ պատմածից աւելի ոչինչ չեմ յիշում:

—Խալիլ-փաշան,—շարունակեց Էլիֆ,—ծեր էր, մեզ նման զաւակ չունէր, նա մեռաւ ինձ թողնելով իր մլակ սիրելի ամուսին Ֆիւզլէը—Հանըմի խնամքին: Մայրագիրս էլ երկար չապրեցաւ իր ամուսնից յետոյ, ինձ կտակելով իր ստացուածքն և այս ապարանքը՝ մեռաւ: Այնուհետև մեծացայ ես փարթամ, ազատ կեանքով իբր դուստր և ժառանգ Խալիլ-փաշայի: Մի օր ման կրգայլ Թուրիդ—դրան մօտերը, երբ երեք պետուրական փաշաներ մեր դէմն ելան:

—«Հանըմ,—ինձ մօտենալով ականջիս փսփսաց սպասուհին,—սրանք են այն երեք զօրագլուխները, որ չորս տարի առաջ Երևանն առան, 300 մարդով 12,000 պարսիկ կոտորեցին, նրանց դիակները դաշտերի կերակուր արին:

—Այդ մե՞նք էին,—հարցուց Փիրատ:

—Այո՛, սիրելիս, մինը դու էիր, մինը Քէօռ—Ջաւուշը...

—Մինն էլ Մահմուտ-փաշան...

—Այո՛: Ես տեսայ քեզ, սիրահարուածի պէս չէի ուզում աչքից հեռացնել. յիշո՞ւմ ես, երբ մօտերուս անցաք, դու խիստ կերպով սկսեցիր ինձ նայել, ես էլ՝ իբրև թէ պատահմամբ, քողը կիսովին բացի և դէմքս քեզ ցոյց տւի...

—Յիշում եմ՝ սիրելիս, այն օրից սկսած սիրահարեցայ քեզ վրայ, պատգամաւորները ուղարկելով խնդրեցի ամուսնանալ. դու էլ, չըմերժեցիր և սիրայօժար յանձն առար:

—Ինչպէ՞ս յանձն չառնէի, Փիրատ ջան,—ասաց Էլիֆ ամուսնի երեսը համբուրելով,—այնուհետև քունս կտրեցաւ, դու աչքիս առաջն էիր, ես հարցուփորձ անելով իմացայ քո ով լինելը, քո բնակարանը, դուցէ ես քեզ պատգամաւոր ուղարկէի եթէ մի օր ուշանայիր ձեռս խնդրել...

—Տիկի՛ն,—ասաց սպասուհին դուռը բանալով,—ճաշը պատրաստ է արդէն:

—Լաւ, այնտեղ սպասի՛ր, հիմա տիրոջդ հետ կըգանք:

Սպասուհին հեռացաւ, Փիրատ անվստահ կերպով,—Էլի՛ֆ,—ասաց նրա աչերի խորքը նայելով,—արի՛ ստոյգն ասա, իսպառ մոռացա՞ծ ես քո քրիստոնէութիւնը, չէս ցանկանում արդեօք նրանց հոգևոր արարողութիւններին մասնակցել: Խնդրում եմ հաւատաս ինձ, չըպահես այդ սուրբ գաղտնիքը: Ինձ համար միևնոյնն են՝ քրիստոնէութիւն և մահմեդականութիւն...

—Փիրատ ջա՛ն,—անկեղծ կերպով պատասխանեց Էլիֆ,—ես արդէն ասացի, որ ոչ մի գաղափար չունիմ իմ հայրենի կրօնի մասին. եթէ մի մասնաւոր հաւատք ունեցած լինէի, չէի ներիլ ինձ դաւաճանելու. բայց եթէ մեռօնի պատրւակով ուզում էի գիտենալ ծագմանս մասին, դա կապւած էր ծնողներիս դտնելու ցնորքին հետ:

—Քրիստոնէութիւնը վատ չէ...

—Եթէ վատ չէ, լաւ էլ...

—Լաւ,—հառաչելով հարցը փակեց Փիրատ,—հիմա ես հարցնեմ քեզ քո հայրենիքի մասին...

—Գնա՛նք, Փիրատ ջա՛ն,—ասաց կինը ոտքի ելնելով,—ճաշենք, յետոյ շատ կըխօսենք...

Հայթա—Փիրատ ակամայ ընդհատեց խօսքն ու ոտքի ելաւ: Սպասուհին արծաթեայ կոնք ու սափորը ձեռին սպասում էր դրան մօտ. այր ու կին լւացւեցան ու բազմեցան ոսկեզօծ բոլորակ սինու շուրջը, որի վրայ շարւած էին տասնեակ պնակներ՝ լի համեղաճաշակ կերակուրներով:

—Եթէ կիսաթեղաթար Ահմատը դաթանները շներին կերցրած չըլինէր,—դիտեց տիկինը ժպտալով,—հիմա մեր ճաշը կատարեալ, սեղանն անթերի կըլինէր:

—Հոգ չէ, Էլիֆ ջան, շներն էլ մեզանով են ապրում:

Հայթա—Փիրատ չըմոռացաւ երկու մեծ բաժակ մաստիքայ խմել:

Գ

Ռդեխ Զիա փաշա

Կարնոյ և ողջ Անատոլի զինուորականների մէջ ամենից բարձր էր իր դիրքով ու պաշտօնով սէրասքէր (սպարապետ) Զիա փաշան, մականւանեալն շիմշեակ (կայծակ): Երկու տարուց ի վեր նա

բազմած էր բոլոր Փոքր-Ասիայի, Հայաստանի և Կիլիկիոյ բղեշխական աթոռին. իբրև փոխ-արքայի՝ անսահման իրաւունք էր տրւած նրան: Նրանից յետոյ յայտնի էին Քէօփրուշու զադէ Ապտուլլահ, Տամատ-Մուստաֆա՝ որ կայսեր փեսաներն էին: Սրանք երկու որոշ կուսակցութիւններ էին ներկայացնում, մինի գլուխն էր Ջիա, միւսին Ապտուլլահ: Հայթա—Փիրատ պատկանում էր երկրորդ կուսակցութեան: Ձրկարծէք՝ սիրելի ընթերցող, թէ այդ կուսակցութիւնները ունէին որոշ սկզբունքներ, տարբեր ուղղութիւններ կառավարութեան մասին. ոչ, դրանք զոյութիւն ունէին միմիայն անձնական շահու տեսակէտով: Ուստի Ջիան իբրև պարագլուխ իր կուսակցութեան, միւս բանակին պատկանողներին հակառակ էր: Նա հակառակ էր աւելի Հայթա—Փիրատին, քանի որ եռանդուն գործողն էր, նա, բայց չէր կարող շօշափելի ապացոյց ձեռք բերելով տապալել, խոհեմ, շրջահայեաց և լուրջ էր Հայթան, նաև յայտնի էր իբրև անվախ, խօսքից գործի, վճից ղէնքի դիմող մարդ, ուստի զգուշանում էր ոչ միայն ինքն՝ այլև իր կուսակցութիւնը խաղալ այս տարօրինակ մարդու հետ. ոչ ոք չէր փափագում նրա հետ հաշիւ ունենալ, նրա կատաղութիւնը գրգռել: Աւելի ընտրում էին ոչ թէ իբրև աստիճան յայտնի ջկռւել, այլ յաղթահարել գաւառանութեամբ առանց իրանց դէմքը ցոյց տալու: «Տաճիկը սայլակով նապաստակ է որսում». այս ազգային առածով էր ղեկավարում Ջիա-Ջիմշակ, սակայն Փիրատ նախազգալով, նրա մասին մի վատ, անկերպարան, կասկած ունենալով, զգուշանում էր բացարձակ հակառակութիւնից: Գիտենալով, որ Ջիան միշտ օգնում է իր հակառակորդներին, ամեն տեսակ շահաւէտ գործերի նրանց էր ուղարկում, վառք, պատիւ նրանց շռայլում: Իսկ իրանց ոչինչ: Նա կասկածով վերաբերւելով փոխ-արքային, չէր վստահանում նրա յանձնած գործերն ի կատար ածել: Ուստի սկսած էր փոխադարձ գաւազրութիւններ:

Ահա այսպիսի իսկական կուսակցութիւններ շարունակւելով մինչև մեր օրերը, ենիչէրիների բարձումից շատ յետոյ, գալձան իբրև թէ երկու որոշ սկզբունքների վրայ հիմնւած կուսակցութիւնները, պահպանողական և ազատամիտ: Պահպանողականները՝ պատկանում են ներկայ մարդախանձ սուլթանական ռէժիմին, ազատամիտները ներկայացուցիչ են Ազատամիտ-Թուրիոյ: Պահպանողական՝ որովհետև իրանց որկորներն յագեցնում է փշրանքներով, ազատամիտ՝ որովհետև միշտ քաղցած են ննջում: Բայց՝ ի մօտոյ քննելով թուրքին այդ դիմակների տակ, գտնում ենք միևնոյն անկիրթ, միևնոյն անխիղճ, միևնոյն դազանաբարոյ խուժանը, որ այդ բառերն Եւրոպայից գողացած՝ քօղարկել են իրանց ինտրիգական պատկերները: Ազատամիտ կուսակցութեան ներկայացուցչէ, Եւրոպայում կրթւած, որ աւելի ճիշտն է, հատուկտոր բաներ սովորած, Մուստաֆա-պէյը չէ տարբերւում բոլորովին անուս, մէտրէսէներում ցեխոտւած Ալիից, որ էֆէնտի, փաշայ կոչումով, դրօշակիրն է սուլթանի, միևնոյն ֆանատիկոս, տարբեր ֆանտազիայով. միևնոյն արիւնախանձ, միևնոյն հրեշաբարոյ էակներն ես տեսնում, որոնք մէկ մէկից տարբերւում են անձնական շահերով և եթէ կամ պօլիտիքական ձևերով: Եթէ երբեմն ազատականների ձայնն հասնում է եւրոպական թերթերին, դա ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ խտւելով, խաբեբայութիւն՝ յանուն հին ռէժիմի տապալման, որովհետև ցանկանում են արտաքին աշխարհներից աջակցութիւն գտնելով անցնել ղեկի գլուխ, դառնալ աւելի շրջահայեաց բռնակալ:

Նրանց ազատամիտները գուրկ են բարոյական բարձր, մարդասէր, կուլտուրական սկզբունքներից, դաստիարակւած չեն բնաւ, այլ ուսած՝ ինչ որ կարող է պարունակել իր մէջ իրանց փչացած գրականութիւնը, ոչ թէ Սարակինոսների որ սուերն էր յունական հանգեալ փիլիսոփայութիւնը: Նրանց աշխարհահայեցողութիւնը չէ տարածւում դուռանի սուերից հեռի: Բացառութիւնն անշուշտ յարգւում է: Ազատամիտ թիւրքերից շատերին հետ ի մօտոյ ծանօթանալով՝ չեմ գտած qarqացած. մարդ միակողմանի մտնագէտներ, լեզւաբաններ, բանաստեղծներ, թարգմանիչներ են աւելի՝ քան դիտնական, լայն զարգացման տէր: Նրանք հետևորդ լինելով ֆրանսական գրականութեան՝ միայն սիրայիրն վէպեր են տեսնում, քաջածանօթ են Տիւմաներ, Թիւլ—վէրներ և այլն, ստէպ արտասանում են յայտնի անուններ, Հիւկո, Ռընան, Սանտօրֆ, Գարւին և այլն՝ որ անգիր են արած մատենագրութեան պատմութիւնից, Հիւկոն Դըրէպըրի, Վօլթըրսքօթը՝ Հայմանի հետ շփոթելով, առանց որոշելու բանաստեղծն լմտատասէրից, վիպասանն հնախոյզից, առանց բմբռնած լինելու նրանց ուղղութիւնները, դէթ տարրական կերպով: Այս կարգին են պատկանում մեծաւ մասամբ անկրօն թիւրքերը, բայց թէ ինչքա՜ն են անկրօն, բայառութիւն է դիտական գիտութեամբ զինւած, իր ուղղութեան մի չատագով գտնել, մի ներկուս անհատ, որ փաստօրէն ապացուցանէ, ի լոյս բերէ իր

Հռչակաւոր իտալական նկարիչ *Պ. ՌՈՒԲԵՆՍ.*

սկզբունքները: Որովհետև կարդացած են Մեsop. Տէյնա, Ձդրաս եղել են նրանց մէջ, որովհետև Փալլիայում իրանց ընկերներն անկրօնութիւն էին քարոզում, իրանք էլ անկրօն են: Ահա նրանց առաջին և վերջին փաստը, միակ դրամագլուխը:—Մահմէտը խարեբայ է,—ասում են,—նա առ աչօք տեսիլների էր մատնւում, ցնորքների մէջ ձիպրէլիլը (Գաբրիէլ) տեսնում, նրա զուռանը քրիստոնէական, հրէական, հեթանոսական կրօնների և իր դարի բժշկականութեան մրուրն է: Նրա մէջ չըկան դերադոյն յայտնութիւններ Աստուածանից նկատելու չափ ևայլն:—Ուրեմն իմ յարգելի ընթերցողը կարող է հակիրճ աւուած մի քանի խօսքով ճանաչել այդ երկու կուսակցութիւններին: Մինը բոլորովին տգէտ, մոլեռանդ, միւսը թերևս անկրօն. մինը կեղեքւում է յանուն կրօնի, հարստահարում յանուն զուռանի: Միւսը պիտի կատարէ նոյն բանն աւելի լրջութեամբ յանուն որկորի և ազգայնութեան: Մինը բնազդումով շարժւող գայլ, միւսը գիտակցութեամբ որսացող աղուէս: Մինը սանձահարւում է երբեմն կրօնի սանձով, միւսը լայն ճարակ գտնում անզուսպ կրքերի: Այո, կարելի էր նոր սերնդից, ազատամիտներից շատ բան սպասել՝ եթէ հիմնական դաստիարակութիւն ունենային՝ իսպառ զերծ զուռանի fէէմներից: Ահա սրանք են Տաճկաստանի այս աւուր ներկայացուցիչները և միևնոյնն էին ենիչէրիների ժամանակ...

Զիա փաշայ, որն աչքի առաջ բերելու համար բաւական է մի քանի խօսք, նստած էր իր պաշտօնական դահլիճում. ծալապատիկ կծկւած օճաղի գլխին, պատառուած կանաչ, կլապիտոն անկւած վերարկուով: Նրա տեղից երևում էր ոչ այնքան բարձրահասակ, ոսկրոտ, ջղային, հաղիւ յիսուն տարեկան մարդ լինելը: Գլխի հաստ պատառանն իր թէբաուտերի տակ էր ծածկում նրա դաժան, կմախքային դէմքը գայլի աչքերի պէս պաղ, ահարկու, բոլորակ, երփներանգ աչքերը: Նրա կշտին նստած էր նոյնպէս մի մռայլ խառնածին երեսոյի նման կլսափայլ, սև դէմքով: Նրա գլխի գոռոզ մազերը, կարճ բեխերն ու մօրուքն սպիտակին կըտային, հաստ շրթներին, սև, կարկեհանի պէս փայլուն աչքերին, երեսնեայ դէմքին նեմսութիւն տարածելով: Դա Պօշնաք-Համտի փաշան էր: Մօքքայի ընտիր սուրճը՝ ոսկեղէն զառֆելով դրւած էր նրանց առաջ, երկար չիպուղներից բարձրանում էին ծխային ալիքներ, զանազան քմահաճ ձևի ամպիկներ յօրինում նրանց գլխին վերև:

—Համտի,—սուրճը շրթունքին տանելով՝ հուսկ ուրեմն լռութիւնն ընդհատեց Զիա-փաշա,—ուզակի գրգռել դրանց թշնամութիւնն՝ անխոհեմութիւն է. Ապտուլլահ և իւրայինք մեծ ազդեցութիւն ունին պալատում, կարող են մեզ յաղթահարել, կարող են իսպառ ջնջել...

—Անշուշտ այդպէս է,—հաստատեց Պօշնաք-Համտի:

—Կարծեմ նրանք էլ հանգիստ չեն մնում...

—Անտարակոյս հանգիստ չեն, երբ ուզում ես իմանալ մեկի լաւ՝ կամ վատ յարաբերութիւնը քեզ հետ, քննիր սրտիդ խորքը: Ինչ որ դուն ուզում ես ինձ անել, նոյնը կընորհիմ ես: Նրանք ղգում են. մենք էլ զօրացնում ենք կասկածը նրանց մէջ:

—Ես էլ այդպէս եմ հասկանում, Համտի. քանի դեռ ուշ չէ, պէտք է մէջին մէջ զործել, ջախջախել Ապտուլլահի ոյժերը:

—Հապա՞, ինչպէ՞ս,—լայն շրթունքը բացաստնելով, սուրճը շօշափելով, հարցուց խառնածինը:

—Դաւադրութեամբ...

—Ինչպէ՞ս կարող ենք դաւել, քանի որ դինուորական ոյժը նրանց կողմն է, միայն Մուլիյէով (քաղաքական պաշտօնեայ) ինչ կարող ենք անել... դու չըգիտէս ենիչէրին:

—Լսիր, բարեկամ, Տամատ-Մուստաֆան էլ ամբաստանւած է, մնում է Հայթա-Ֆիրատի բախտն անորոշ:

—Հէնց դա է ամենամեծ թշնամին. դա է իր խմբի խելացին, դա՝ որ ենիչէրին կարող է շարժել:

—Այո, ես էլ հեշտութեամբ պիտի տապալեմ:

—Հեշտութեամբ.—Հարց տւեց և պատասխանեց Համտի դաւաթը մի կողմ դնելով, քթից, բերնից ծխային հեղեղներ ժայթքելով աչքերն անթարթ դաւակցին սևեռած,—ինչ, հէշտ, դու զառանցում ես՝ Զիա. ես ասացի արդէն՝ նա բանակի հոգին է, կարող է քեզ էլ, ինձ էլ մի ակնարկով կախել տալ պատահած հացադործ խոտորջրցու *) ձեռօք:

—Այդ այդպէս է,—ժպտելով ընդհատեց Զիա, նա կարող է յաղթահարել մեզ՝ եթէ ուղղակի զորձենք, բայց ինչ կարող է անել այն պարզամիտ, վեհանձն առիւծը, երբ մենք առանց երևելու՝ իր ձեռօքն իրան կախել տանք:

---

*) Խոտորջրցիք Հայ-կաթոլիկներ են Կարնոյ այդ անուն գաւառում և պարապում են հացադործութեամբ, կախելու իրաւունքն հին ժամանակ երևի հացադործներինն է, որ նրանք էին կատարում, թէև ակամայ, դահճի տեղ պաշտօնը: Ս.

—Քեզ չեմ հասկանում, բարեկամ...

Կարող ես չըհասկանալ. Պօշնակ, բայց երբ ինքս բացատրեմ, դու իսկոյն սէլաւէք (երկրպագութիւն) պիտի բերես... Ես չամաչ, նրան պիտի խեղդեմ ղուռանի նէբրական թոկով:

— Դու շատ հետաքրքիր ես խօսում:

—Ծանօթ ես Ֆիրատի ընտանեկան կեանքին:

— Ո՛չ այնքան...

—Լաւ, Ֆիրատ սերահաը է իր միակ կնոջ, էլիֆին, որից ամենևին զաւակ չէ լինում. այդ իսկ պատճառաւ նա հարբում է միշտ: Ի՞նչ կասէիր՝ եթէ մի լաւ ընթրիք սարքէի, լաւ խմացնէի, յետոյ մեր արծաթասէր ծուռ-բերան ղադին կաշառելով, նրա վրայ արձակէի, հրաժարեցնէի շառթով (ուխտ), որ մեւս անդամ խմելուն պէս՝ կըլուծւի ամուսնութիւնը... Մի քանի օր յետոյ կրկին արբեցնէի, ես ինքս խլէի դեղանուշ էլիֆը...

—Հրաշալի՛, — մրմռաց խառնածինը մի գարշելի ժպիտով,—թշնամին հնարագէտ է շինում մարդուս:

—Այո՛, հրաշալի միտք..

—Արդեօք գործն այդպէս կըգնա՞յ, էլիֆ կամուսնանա՞յ քեզ հետ:

—Թէև դա հարց է, բայց՝ ղադուն հետ այնպէս կրկարգադրենք՝ որ անշուշտ իմ ուզածին պէս լինի հետևանքը: Հապա՛, Համտի: Թշնամուն թոյլ կողմից կըզարնեն. Հայթայի թոյլ կողմն արբեցութիւնն է:

—Բայց՝ Զհա՛, պժւարին և վտանգաւոր մի՛ջոց է:

—Պժւարին է՝ բայց ոչ վտանգաւոր: Ղուռանի էէրիէթով (օրէնք), շառթով երբ բաժանւած է լինում կինը, պէտք է անպատճառ հիլուլա (խայտառակ) լինի մի օր օտար տղամարդու հետ ամուսնական նիհիահով (ապահարզան) և շառթով: Ես այնպէս կրկարգադրեմ գործն՝ որ էլիֆն ինձ մնայ, Ֆիրատ ուզէ չուզէ, իր աչքով տեսնէ նրա իմ կիների շարքը մտնելը... Էլիֆ կատարեալ հուրի է, բանըեր (կաւատ, մոցիքուլ) կինելն ասում են խիտ սիրունն է...

— Ղուռանի այդ տրամադրութիւնն հրաշալի է, ժպտաց խառնածինը,—ուզած կինդ ձեռք կըբերես: Բայց՝ Զհա՛, եթէ քո ասածին պէս շարունակւի գործը, իրօք որ հրաշալի դաւադրութիւն կըլինի: Կրօնի առաջ լուռ են լեզուները...

—Գիտե՞ս, այնուհետև ինչ կըլինի: Էլիֆը մի քանի օր պահելուց յետոյ՝ կըյանձնեմ տիրոջը, Հայթան իմ ստրուկը կըդառնայ, որովհետև էլիֆ ինձնից յետ պիտի ուզէ, նախքան իմ բարեհաճութիւնը, յետ պիտի ուզէ բիւր աղաչանքով: Ես էլ մինչև չըստորացնեմ նրան, մինչև մեր համախօսականին ստորագրել չըտամ, չեմ յանձնիլ էլիֆը... ահա իմ դաւի յատակագիծը...

—Գէշ չէ, բայց մի քիչ Հայթա—Ֆիրատի նման գազանների հետ այդպէս խաղալը վտանգաւոր չէ՞, վտանգաւոր չէ՞ շոյել առիւծի բաշերն ի նշան գոհանքի...

ՍԷՒԱՆ

(Կըշարունակւի)

Ի ԶՈՒՐ ՍԷՐ

Ես ազատ դաշտում՝ ցորեն ցանեցի,
Արեւը նըրան այրեց, մըորըկեց.
Թռչնից խնդագին տաղեր խնդրեցի,
Բայց նա ինձ տըխուր մեղեդի երգեց.
Գիրկըս պարզեցի ես քեզ, նազելիս,
Քեզ ընծայեցի իմ սէրն ու խոհերը,
Բայց դու վշտերով այրեցիր հոգիս,
Ընդ միշտ մընացիր սառն ու անտարբեր.
Այդպէս, ո՛ զաւակ սիրոյ նենգութեան,
Սիրոյ թոյնն ի զուր ըմպեցի, աւա՛ղ,
Էլ ի՞նչ ըսպասեմ. մընայլ գերեզմա՞ն...
Բայց նա էլ քեզ պէս անգութ է եւ պաղ:

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

ՂՐԻՄԻ ԹԵՐԱԿՂԶԻՆ *)

(Ձանապարհորդի յիշատակարանից)

Կերճ. դա նշանաւոր նաւահանգիստներից մէկն է և ունի 35,000 բնակիչ: Քաղաքը ընկած է Միհրդատ սարի լանջին և բաւական գեղեցիկ տեսարան է ներկայացնում ծովից: Կերճում կայ 5 եկեղեցի, երկու գիմնազիա, օրիորդաց ինստիտուտ, արհեստագիտական և տարրական դըպրոցներ, գրադարան-ընթերցարան, հնագիտական մուզէյ, որը բաւական հռչակւած է: Կերճի տեղ հին ժամանակներում եղել է Պանտէկապէյ քաղաքը, որը պատմաբանների ասելով շինւած էր 480 թ. Քր. առաջ: Դա սկզբում առանձին հասարակապետութիւն էր, իսկ յետոյ ընկաւ Տլրինների իշխանութեան տակ և Բոսֆորեան թագաւորութեան մայրաքաղաքը դարձաւ... Մեծն Միհրդատ մահից յետոյ այդ հոյակապ քաղաքը հետզհետէ կորցրեց իր նշանակութիւնը, զանազան ժամանակներում զանազան

*) Տես Տարազ № 41.

Կախարդ հիշց դարեբի.

ազգերի ձեռքն անցաւ և վերջապէս Կերճ կոչեցաւ. 1771 թ. Քիւչուկ Կայնարջի դաշնագրով Կերճը միացաւ Ռուսաստանի հետ. Միհրդատ սարի գագաթին մինչև այժմ էլ կան մի քանի քարեր, որոնք Միհրդատի բազկաթոռ են կոչւում, որովհետև ըստ աւանդութեան՝ այդտեղ երբեմն նստել է Միհրդատը, դիտել հեռաւոր տեսարանները, ծովի ալեծուփ մակերևոյթը... Ղրիմի թաթարների մէջ այդ սարի մասին մի քանի աւանդութիւններ կան.. ոմանք ասում են՝ Միհրդատը և մի հսկայ էր, որ Աստծոյ հրամանով քար դարձաւ և այդ սարը կազմեց... Ոմանք էլ ասում են Միհրդատի սարի մէջ թաղուած են մի մեծազօր թագաւորի անչափ հարստութիւններ և այլն և այլն... Միհրդատի սարի վրայ կան բազմաթիւ ստորերկրեայ անցքեր և մինչև այժմ էլ նրա զանազան կողմերից դուրս են գալիս նշանաւոր հնութիւններ. օր. 1894 թ. գտնել է մի մարմարեայ մեծ առիւծ (մօտ 200 փ. ծանր.), որը հնագէտների ասելով շինուած է II կամ III դարում Քր. առաջ, և որը այժմ Պետերբուրգի էրմիտաժումն է։ Առհասարակ Կերճը հնութիւնների մի սպառարան կարելի է համարել... Բազմաթիւ մարդիկ կան, որոնք միայն հին դրամների և իրերի վաճառումով են իրանց ապրուստը հայթհայթում։ Կերճից 14 վերստ հեռու գտնւում է Չոկրակսի հռչակաւոր ցեխի բուժարանը, որը բնակած է Չոկրակս լճի ափին, $1^1/_2$ վերստ հեռու Ազովեան ծովից։

Եւպատորիա *)։ Այդ քաղաքը բնակած է Սև ծովի ափին Ղրիմի արևմտեան մասում։ Նա սկզբում կոչւում էր Գեօզլեւէ, իսկ Եկատերինա II թագուհու ժամանակ Եւպատորիա անունն ստացաւ իբրև յիշատակ Եւպատորեան բերդի, որ գտնւում էր Խերսոնէս քաղաքի մօտ։ Եւպատորիան գաւառական քաղաք է և ունի նաւահանգիստ, 20,000 բնակիչ, որի ամենամեծ մասը ռուսներ են, իսկ մնացածը թաթարներ, յոյներ, կարաիմներ, հայեր և այլն։ Կարաիմներն այդտեղ ունեն 1 սեմինարիա, ուր ուսուցիչներ և կրօնաւորներ են պատրաստւում։ Բացի դրանից Եւպ. կան՝ օրիորդաց գիմնազիա, տղայոց պրոգիմնազիա, ծխական դպրոցներ, որոնցից մէկը հայերինն է։

Եւպ. հետաքրքիր է տեսնել հին բերդի աւերակները և դրան կից թաթարական Ջում-Ջամի մզկիթը, որ շինուած է 1552 թ. Դևլեթ Գիրէյ խանի հրամանով։ Այդ քաղաքը նշանաւոր է իր առողջ կլիմայով, ծովային լողարաններով և Մօյնակ ցեխի բուժարանով, որ միայն $1^1/_2$ վերստ հեռու է քաղաքից։

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ԿՈՅՍԻ ԱՉՔԵՐԸ

(Առակ բանասեղծութիւն)

Քաղցրանուագ Փարոնի հանդարտ ալիքները խաղում էին երկնքի ճառագայթների հետ. նրանք պարզ էին որպէս հայելի և մաքուր—որպէս ձիւն։ Ցերեկը վճիտ ջրերի յատակում պսպղում էին գոյնզգոյն քարերն ու աւազը, իսկ ափերի երփներանգ ծաղիկներն ու բոյսերը ցոլում էին նրա մանրիկ ալիքների վրայ։ Բայց գեղեցիկ էր գիշերը, երբ երկնքի կոյսը իր հազարաւոր նաժիշտներով անցնում էր նրա արծաթափայլ ալիքների վրայից և դնում էր Հանգչելու գեղատեսիլ Ամուրի հեշտասէր գրկում...

Եւ մատաղ Աքերոնը, որ ամեն օր անց ու դարձ էր անում սրբազան ջրերի վրայից, սիրում էր նայել նրա մեղմիկ ալիքներին, որոնց միանուագ հառաչանքները, իրանց նւագած ձայներով բերում էին նաև վաղուց մոռացւած Սարաուատայի վշտալի յիշատակը։

—

Գարնան գեղատեսիլ օրերի մէկն էր, երբ Աքերոնն իր մշտազուարթ դէմքը դարձրեց դէպի Փարոնի ալիքները, նրա հրաշալիքներով զարմանալու համար... բայց ո՛վ սարսափ, նա ինչ տեսաւ —գետի պարզ յատակի և գոյնզգոյն աւազի տեղ մի անդունդ, որ խոր էր որպէս Սատուրնայի դժոխքը, և սև ու ահաւոր՝ որպէս Բուերթրայի սրտրոցը...

—«Ո՞, Փարոն, աղաղակեց մատաղ Աքերոնը, ո՞ւր է քո գեղատեսիլ յատակը, ո՞ւր է քո ալիքների հեշտալուր հառաչանքը... այդ ամենի փոխարէն դու քո գրկում բաց ես արել մի անդունդ, որ այնքան սև է ու ահարկու որքան Սանդարամէտը»։

—«Դու Աքերոն, մի՛թէ զարմանում ես, դու, որ այդքան շատ բան ես տեսել աշխարհում, շընջացին մթագնած ալիքները և անյայտ ցաւ խոր ու անհուն տարածութեան մէջ։

—«Բայց ինչպէս. հարցրեց Աքերոն։

—«Նայիր վերև, խօսքն ընդմիջելով շընջաց մի մթագնած ալիք...

Եւ Աքերոնը նայեց դէպի վեր, ուր ամպերի մօտից նայում էր սրբազան դետի ալիքներին Պէլասիտէ յաւերժահարսը, որին Վեներան հէնց նոր էր ընտրել աշխարհի մահկանացու կոյսերի միջից և բարձրացրել էր ջինջ կապոյտը...

Փաղցրաձայն Փարոնի ալիքների մէջ անդրադարձել էր կոյսի աչքերի ցոլքը... աչեր, որոնք այնքան խոր էին որքան դժոխքը, մութ ու ահաւոր որպէս Բուերթրայի սանդարամէտը։

—

Այդ օրւանից ի վեր մատաղ Աքերոնը թողեց պարզ և վճիտ Փարոնի ալիքները, թողեց հեշտալուր հառաչանքի ձայները և մենակ ու տխուր սկսեց շրջել Մաօնահի չքնաղ դաշտերի մէջ, ուր չէր դալիս նրան վրդովելու երկրային կոյսի աչքերի ահաւոր տեսքը...

ՊԵՏ. ՄՈՍՈՒԵԱՆՑ

*) Ծանօթ. Այդ բաղաբը չըկարողացաւ տեսնել. բայց առվլեեեւ դա էլ ճշմարտութիւն է, ուստի հարկաւոր համարեցինք համառօտակի նկարագրել ականատեսների տեղեկութիւններից օգտւելով...

ՄՈՒՏՑԻԱԾ ԽՕՍՔԵՐ

(Շ ե ր դ ր ի ճ ի)

Ինձ թւում է (ոչ երազի է նըման և ոչ էլ իրականութեան), որ մի աներևոյթ, բայց ազատ ձեռք գրկում է ինձ և անսանձ քաշում բաց տարածութեան մէջ: Ես ինձ անօգնական եմ զգում և մինչև անգամ չեմ փորձում հակառակել առեղծւածական ոյժին. կարծես թէ՝ որ և է օրհասական բան է սպասում ինձ: Եւ. որքան խորն եմ թափանցում անսահման հեռաւորութեան մէջ, նոյնքան սիրագին են երևում տեսիլքները, նոյնքան արագութեամբ լոյսին փոխարինում է աղջամուղջը, նոյնքան վճռական կերպով մարում է տիեզերական կեանքը՝ ընդհանուր մեռելութեան լծի տակ:

Գորշագոյն երկինքը, գորշագոյն տարածութիւնը լցւած են թափառող գորշագոյն խաբուսիկ երեւոյթներով: Գորշանման ճահճի շուրջը եռում է և բարձրանում են այնտեղից կծկւելով գորշագոյն ցեռուններ: Գորշագոյն օդում անձայն սաւառնում են գորշագոյն թռչուններ: Մինչև անգամ, ճանապարհն էլ կարծես, ծածկւած է գորշագոյն մոխրով: Սիրտ է պատռւում՝ առեղծւածական անչափ սեղմող վշտի տակ:

Վհատեցնում է ինձ գորշագոյն տօնը. բայց ամենից աւելի վհատեցնում է ինձ լռութիւնը: Ոչ ձայն, ոչ ծպտուն, ոչինչ, բացի մահւան կնիքից: Եւ որքան խորն եմ ընկղմւում այդ մերկանգամ թագաւորութեան մէջ, նոյնքան աւելի բոլոր էութեամբ տիրում է ինձ երկիւղը և բթացած անյուսութեան դիտակցութիւնը, որի մէջ ամեն ինչ բոլորովին սառել և թմրել էր: Ձգաւորութեան զգացմունքը սակաւ առ սակաւ ներս է սողում ամբողջ էութեանս խորքը, և ես սկսում եմ զգալ, որ հեռու չէ և այն վայրկեանը, երբ իմ մէջ ևս ամեն ինչ կըլռէ:

Ահա և ես նպատակիս մօտեցայ.— առջևս ընկած է գերեզմանատունը: Կարծես թէ՝ ալէկոծւած ծով լինի. տարածւել է նա հեռաւոր և ընդարձակ՝ անբաւ տարածութեան վրայ, ծածկւած անհամար գերեզմանների հողաբլուրներով: Անհոգութիւնը և կատաղութիւնը ամենուրեք դրել էին իրանց կնիքը: Տաճարը, որը մի ժամանակ օրհնաբանում էր հանգուցեալներին, կանգնած էր կիսաւերակ, բացւած գմբէթով, ապաստան լինելով չղջիկներին և գիշերային թռչուններին: Ձանգակը, որը մի ժամանակ հրաւիրում էր կենդանի մարդկանց և ողբում էր հանգուցեալների համար, կոտրւած ընկած էր տաճարի պատւանդանի մօտ: Գերեզմանաքարերը, պարիսպը—բոլորը թափւել էին այս ու այն կողմ ցրւած, ծածկւած մամռով և մոլախոտով:

Երևի, ինքը՝ գառամեալ Ադամը այստեղ է ղրել իր ոսկորները: Նրան էլին հետևում սերունդները յերկրի յետևից և կուտակւում էին մեկը միւսի վրայ, մինչև որ վերջապէս, երկրի որովայնը կըկշտանար մեռելներով...

Ֆ. ԹՈՒՄԵՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

IV

Ստոկհոլմ, 15/27 սեպտեմբեր.

Ստոկհոլմի ցուցահանդիսի բժշկական բաժինը.

Բացի մեքենաներից, որոնք յարմարեցրած են գործնական վարժութիւնների համար, կան մի շարք մեքենաներ, որոնք յատկացրած են կրաւորական շարժումների համար, այսինքն այնպիսի շարժումներ, որոնց համար մկանունքների ոյժ չէ պահանջւում հիւանդից. այդ մեքենաները գործ են անում, երբ յօդերի կապակցութիւնները թուլացած են և մկանունքները կորցրած են լինում իրանց կակղութիւնը, նրբութիւնը և այդպիսով արգելք են լինում շարժումներին. մշտական մեքենայական վարժութիւնը վերադարձնում է մարմնի այդ մասերին իրանց կորցրած յատկութիւնները:

Վերջապէս կան մի երրորդ շարք մեքենաներ, որոնք յարմարեցրած են մասաժի բոլոր տեսակներին, սկսած սովորական շփումից, տրորումից մինչև ամենաբարդ գործողութիւնները:

Այդ դրութիւնը ընդհանրապէս մեծ առողջապահական նշանակութիւն ունի տղաների և աղջիկների համար, որոնք իրանց կազմութեան ընդհանուր թուլութեան պատճառաւ չեն կարող մասնակցել փոքրիկների համար նշանակւած մարմնամարզական ընդհանուր վարժութիւններին:

Կազմւածքի ընդհանուր թուլութիւնը պատճառ է լինում մարմնի անվայելուչ և վնասակար դիրք ստանալուն և ողնաշարի ծռւելուն. այդ դէպքերում ընդդիմադրութեան յաղթող վարժութիւնները անհրաժեշտ են մկանունքների բոլոր խմբերի համար, որպէսզի մէկ խումբը զարգանալով՝ միւսները չետ չըմնան. այդպիսով մարդակազմական հաւասարակշռութիւնը չի խանգարւիլ. հետևելով այդ դրութեան՝ կարելի կըլինի ժառանգական թուլակազմութեան դէմ յաջող կերպով կռւել և տալ հասարակութեան առողջ անդամներ, ինչպիսիները որ տալիս են առողջ ծնողները:

Ձանգերի մեթոդը նոյնպէս կարող է, իբրև առողջապահական, միջոց, մեծ ծառայութիւն մատուցանել այնպիսիներին, որոնց սովորական զբաղմունքները հարկադրում են նրանց նըստած, անշարժ կեանք վարել. այն ուսուցիչներին, գրողներին, գրասենեակում ծառայողներին, վաճառականներին և այլ և այլն, երբ որ նրանց կազմւածքը, տարիքը, հասարակական դրութիւնը արգելք են լինում սովորական մարմնամարզական վարժութիւններին մասնակցել: Թէ որքան մեծ է այդ տեսակէտից Ձան-

դերի դրութեան նշանակութիւնը, հասկանալի կըլինի եթէ աւելացնենք որ այդպիսիներն են, որ գլխաւորապէս թուլակազմ, այլասեռեալ սերունդ են տալիս մարդկութեան։

Ընդհանուր առողջապահական տեսակէտից ունեցած այդ մեծ նշանակութեան, մեզ հետաքրքրող դրութեան գլխաւոր ասպարէզը բժշկականութեան մէջ է. «Զարմանալի է», ասում էր մեզ ուղեկցող բժիշկը, «թէ ինչ լաւ ազդեցութիւն են ունենում մշտական չափաւորաձ և բազմատեսակ մեքենայական վարժութիւնները սրտի հիւանդութիւնների վրայ. դրանց շատերը, որ դեռ նոր են, կարելի է լինում բոլորովին բժշկել, հների զարգացման առաջն առնել, իսկ ընդհանրապէս բոլորի դրութիւնը լաւացնել»։

Միևնոյնը կարելի է ասել ջլախտութեան (neurast hénique) և ախտացեալների (hysterie) մասին։ Միայն թէ ընդհանրապէս ջղային հիւանդները պէտք է աւելի երկար ենթարկուեն այդ վարժութիւններին, եռանդով հետևեն բժշկի բոլոր ցոյց տւածներին և չըվհատեն։

Ոչ պակաս կարող են օգտել թոյլ թոքեր ունեցողները, որոնք կարող են արհեստական կերպով աւելի խորունկ շնչառութիւն ունենալ, աւելի մեծ քանակութեամբ օդ ծծել և զարգացնել իրանց կրծքի թոյլ մկանունքները։

Կարող են օգտել նոյնպէս ստամոքսի, աղիքների, մշտական տկարութիւններ ունեցողները. լաւ է ազդում նոյնպէս կանանց հիւանդութիւնների վրայ, վերջապէս այն բոլոր դէպքերում, ուր գործադրւում է սովորական մասաժը։

Մինչև վերջին ժամանակները պ. Զանդերի դրութիւնը գործադրւում էր ծուռ ողնաշարները ուղղելու համար. բայց ներկայումս քանի որ բժ. Կալօի (Calot) ցոյց տւած միջոցը արմատական է հանդիսանում այդ ցաւի դէմ, ի զուր է դիմել պ. Զանդերի դրութեան, որ նպատակին մասամբ է միայն հասյնում, երկար է տևում և լմանկ է նստում։

Ամփոփելով մեր խօսքը, կարող ենք ասել, որ Զանդերի դրութիւնը մի շատ օգտակար գէնք է բժշկի ձեռքում, բայց... նա սուղ է նստում. ամփոփ կալմակերպութեան համար անհրաժեշտ է 74 մեքենայ. մեզանում, երբ բոլորը լսողը վաստակ են փնտրում, ոչ ոք դրամագլուխը այդ գործին չի նէիրիլ, բայց հասարակական և բարեգործական հիմնարկութիւնները թէ կարող են և թէ պարտական են անել. և միայն հասարակական հողի վրայ դրւած այդպիսի հիմնարկութիւնները իրանց առողջապահական նպատակին կըհասնեն։

Բժ. Ե. Մ.

Աղքատանո՞ց, թէ անկելանոց

—

Առաջին անգամ ոտքս դնելով հագուայ աղքատանոցը, ակամայ հարցրի— աղքատանոց է սա, թէ անկելանոց։

Չարկ չըկայ բացատրելու, որ այդ երկու բառերը, որքան էլ առնչութիւն ունենան միմեանց հետ, այնուամենայնիւ էական նշանակութեամբ տարբեր են։

Աղքատանոցում պատսպարւում ու կերակրւում է մարդկութեան այն դասակարդը, որ իրանից անկախ հանգամանքներից ու պատճառներից ըստիպւած, չի կարողանում ինքն իրան կերակրել, չի կարողանում իր գոյութիւնը պահպանել։ Իսկ անկելանոց կոչւում են այն հիմնարկութիւնները, ուր ապաստան են գտնում ոչ թէ բախտից, ճակատագրից հալածւածները, այլ՝ եթէ կարելի է ասել, ինքնահալածւածները։

Այս է երկու հիմնարկութիւնների մէջ եղած տարբերութիւնը։

Աղքատանոցները, ներկայ մարդկութեան հասկացողութեամբ և ընկերական ներկայ պայմանների մէջ — բարեխղճատակ հիմնարկութիւններ են, որոնք իրանց ճակատին կրում են մարդասիրութեան դրոշմը։ Բայց դա մեղայլի մի երեսն է, որ ի ցոյց ենք դնում մեր խղճը չըվրդովելու համար։ Այնինչ ամեն մի բարեխիղճ մարդ, կանգնելով աղքատանոցի անշուք կամ փառաւոր շինութեան առաջ, անշուշտ կասէ — սա մարդկութեան նախատինքն է, սա գրկանքի կոթողն է։

Ո՞ր ապգը, ո՞ր հասարակութիւնը կամ ո՞ր ժողովուրդն աւելի արժանի է մարդասէր կոչման. նա արդեօք, որ բազմաթիւ փառաւոր ապրատանոցներ ունի, թէ նա, որ ոչ ապրատ ունի, ոչ ապրատանոց։

Ապրատութիւն բառը եթէ գրկանք բառի փոխենք, այն ժամանակ միայն կըմօտենայ իրականութեան։ Բայց չէ՞ որ գրկողը դատապարտելի է։

Անհատները երբ գրկում են մէկին, ենթարկւում են պատասխանատուութեան, այն ինչ գրկող ազգերը, ժողովուրդները, համայնքները զերծ են ամեն տեսակ պատասխանատուութիւնից։

Խլեցէք մէկի մի հատ կոպէկը — ձեզ քարշ կըտան դէպի դատարան։ Սրա հակառակ խանութի կամ գործարան բացէք, քամեցէք թշւառների հիւթն ու ծուծը. աշխատաւորների քրտնքի գնով դուք միլիոններ դիզեցէք և այդ աշխատաւորին մի տաք միջոց, որ երկրի վրայ մի բուռն հող, մի խցիկ ունենայ, որ ինքն իրան կերակրի — դուք իրաւունք ունիք։

Աղքատը գրկանքի զոհն է, նա մարդկութեան կենդանի՞ նախատինքն է...

Հայց դառնանք մեր նիւթին։

Հագւայ աղքատանոցը հագւայ fur գայթակղութեան է՝ իր լայն խմաստով, կուռծաղիկը փոխաբերական մտքով։ Հայ թերթերը շատ են գրել այդ խղճուկ հիմնարկութեան մասին։ Ոմանք գովել, ոմանք էլ պախարակել են։ Որքան գիտենք, այդ գժբախտ հիմնարկութեան դըժբախտ ճակատագրի վարման գործը փոխն ի փոխ անցել է զանազանների ձեռքը. բայց մինչև վերջն էլ նա մնացել է իր նախնական լքեալ վիճակի մէջ։

Նա չունի հիմնական որոշ ծրագիր։

Մենք հաւատում ենք, որ ամենքն էլ, ոգևորւած մարդասիրական ձգտումով, տրամադիր են եղել այդ բախտից հալածւածների կայանը կանոնաւոր վիճակի մէջ դնելու և պահելու. բայց բարի ձգտում ու տրամադրութիւնները բաւական չեն որ և է մի գործ շինելու համար. դրանց հետ պէտք է ունենալ և ձեռնհասութիւն։

Ահա այդ բանը պակասել է միշտ, որով աղքատանոցը մնացել է նոյնը։

Աղքատանոց մտնելուց առաջ, ենթադրում էի, թէ պիտի հանդիպեմ արիւնոլոգ մի երկրի մնացորդներին, սրահալած թշւառների այն բեկորներին, որոնց կեանքի ու վիճակի հետ այնքան մօտից ծանօթ էի, եւ սրա

հետ միասին՝ նրանց դառն արցունքները, սրտախորով հառաչանք ու մրմունջները և տանջած, տառապած դէմքեր, ուր պիտի կարդայի այն բարբարոսութիւնների պատմութիւնը, որոնց բովից անցել էին նրանք։

Չէ՞ որ մարդասիրական անկեղծ հոգածութեան ու արգահատանքի արժանի են այդ գաղթականները, որոնք իրանց անխոնջ աշխատութեան շնորհիւ երէկ բան ունէին, իսկ քաղաքական մեքենայութիւնների շնորհիւ այսօր ոչինչ չունին...

Հայց մօտ երկուհարիւր քառասուն աղքատների մէջ, իսկական տաճկա-Հայաստանցի գաղթականներ շատ քիչ տեսայ. մեծամասնութիւնը՝ կին թէ աղջիկ, պատանի կամ ծեր, առոյգ, աշխատութեան ընդունակներ էին, բայց աշխատանքից փախչող ծոյլեր, որոնց շնորհիւ այդ աղքատանոցը անկելանոցի էր վերածւել։

Արդէն յայտնի պիտի լինի, որ մի քանի յարգելի տիկինների յորդորանքով և նրանց նախաձեռնութեամբ ու անմիջական հսկողութեան տակ Հագւայ Մարդասիրական Ընկերութիւնը հոգում է այդ աղքատների ձմերնային անհրաժեշտ պէտքերը։ Եւ քանի որ գործի գլուխն անցել են կանայք, կարելի է յուսալ, որ աղքատները կըխնամուեն կանոնաւորութեամբ։

Կինը ընկերութեան մէջ զարմանալի ոյժ է ներկայացնում. նա հրաշքներ կարող է գործել։ Հայց մի՞թէ ամեն կին կին է, մի՞թէ ամենքն էլ թոյլ կըտան իրանց դուրս գալ շքեղ սալոններից և մտնել աղքատի դրութեան մէջ, մտնել աղքատանոցի անշուք յարկի տակ, ինչպէս արել էին այդ օրը տ. Թ. Կաճկաճեանը և օր. Եղիսաբէթ Թումայեանը։

Այն ժամանակ, երբ չիշեալ տիկիններն ու օրիորդը ստանձնել են աղքատների պէտքերը հոգալու և հսկելու գործը, աղքատանոցի վարչութիւնն էլ իր պարտականութիւնը պէտք է կատարի. օր. Թումայեանը պէտք է հսկի սենեակների մաքրութեան վրայ, և՝ որ ամենից անհրաժեշտն է, պէտք է իսկական աղքատներին կեղծ աղքատներից զատէ, որպէս զի այդ հիմնարկութիւնը ազատուի ծոյլերի և ձրիակերներների անկելանոց դառնալուց։

Մեզ ասացին, որ 60—70 հոգի նոր եկած գաղթականներ կան, որոնց՝ աղքատանոցում տեղ չըլինելու պատճառով, տեղաւորած են մարդասիրական ընկ. դպրոցի ինչ-որ շէնքի մէջ։ Ահա հաստավիզ ձրիակերներին զանազան գործեր տալով, այդ գաղթականներին պէտք է տեղաւորել։

Ցոյս ունենք, որ ամեն բան կարգի կ՚ընկնի, բացի հիմնական ծրագրից։

Ա. Յ. Մ.

գեղարուեստ

Թատրոն եւ նկարչութիւն

Օպերան հագւում անցեալ սեզոնի յաջողութիւնը դեռ չունի։ Աչքի են ընկնում տ. տ. Էնկէիսս և Մարշադտենօր պ Կոստանեանը թէև ոչ բարձր, բայց վերջին աստիճանի քընքոյշ տենօր ունի։ Երկու անգամ էլ Ֆաուստ և Դեմոնի մէջ փոքրիկ դերում յաջող էր, որովհետև Ֆաուստ օպերան հէնց ամբողջապէս շատ դժւար ներկայացնելի է և երգելի, մանաւանդ հագւայ թատրոնում։ Այնդայում տ. Էվիսս իրան յատուկ շնորհալի ձայնով մի քանի արիաներից և դուէտներից յետոյ ստացաւ աղմկալից ծափահարութիւններ։ Խորը երգում է ներդաշնակ, օրկեստրը Տրուֆֆի ղեկավարութեամբ լաւ է։ Բալետ չէ դրւում, պարողները դեռ չեն եկել։ Ակսէսուարները, ղեկավարները, հագուստները, և նոյն իսկ թատրոնը մի անխրօնիզմ են ներկայացնում հրեղէն քաղաքում, դիզւած ոսկիների աշխարհում։ Անտրակտներում մելոմանների կոկորդների, ցուցամատների ադամանդները ցոլացնում էին իրանց լոյսը կորնդորների խորքերը ու դիտողին պարզ երևում էին տեսարաններ աւելի հետաքրքրական, քան բեմի վրայ։

—

Արքունական թատրոնի անտեսպրիզայի նոր հրաւիրած երգչուհին (դրամատիկ-սոպրանօ) Լիբիա Դրոգի դեբիւտը կայացաւ ամսոյս 2-ին։ Երգչուհին դուրս եկաւ Հուգենոտների մէջ Վալենտինայի դերում և ցոյց տւեց, որ հմուտ դերասանուհի ու երգչուհի է։ Տիկին Դրոգի ձայնը վերին ռեգիստրում հնչում է դրամատիկ, իսկ ստորին ռեգիստրում՝ թոյլ է և ճասյաղ։ Ընդհանրապէս դուբեկան է, մանաւանդ իր խաղով։ Արտաքինը բեմական է։

Մի երկու օր առաջ կայացաւ տ. Կարամզինա-Ժուկովսկայայի բենեֆիսը։ Այդ երգչուհին խելացի է գտնւել իր բենեֆիսին դնել Մարգարէ, ուր կոյր մօր դերում նա անհամեմատ լաւ է, քան մի ւս իր բոլոր դերերում։ Թատրոնը գրեթէ լիքն էր։

Երկուշաբթի, ամսոյս 3-ին, Տրաւիատայի ներկայացման մուտքը յատկացըրւած էր Թէֆլիսի III-րդ գիմնազիոնի 8-րդ դասարանի չքաւոր աշակերտների օգտին։ Օր. Պապայեանը այդ երեկոյ փայլեց Վիօլետայի դերում աւելի, քան երբ և է, մեծ ապդեցութիւն գործելով հասարակութեան վրայ։ Թիֆլիսն աւելի լաւ Վիօլետա չի տեսել երգեցողութեան կողմից։ Գալով խաղին, օր. Պապայեանն աւելի բնական է խաղում, քան էֆէկտով, ուստի նրա խաղի նրբութիւնները ամբոխի աչքին չեն ընկնում։

Ամսոյս 4-ին ներկայացում չըկար։ Իսկ 5-ին Եւգենիյ Օնեգին էր, որի մասին խօսել ենք մի քանի անգամ։ Հարկաւ, այստեղ ևս առաջին փայլը օր. Պապայեանն է, յետոյ պ. Կամեօնսկին։

Ամսոյս 6-ին կայացաւ օր. Պոլիտովայի բենեֆիսը։ Չեռևելով տ. Ժուկովսկայայի օրինակին, օրիորդը ընտրել էր Այիդա, այսինքն այն օպերան, ուր նա աւելի աջող է երգում ու խաղում։ Դժբախտաբար, հասարակութիւն քիչ կար։ Օր. Պոլիտովան ստացաւ մի քանի նւէրներ։

—

Չորեքշաբթի, նոյեմբերի 5-ին Ազնւականների թատրոնում կայացաւ հայոց նորակազմ թատրոնական խմբի առաջին ներկայացումը։ Խաղացւում էր Ղարաբաղի Ասղաբախը (և ոչ Ասղագհs, ինչպէս թարգմանել է Բաֆֆին) անունով դրաման, որ կազմըւած է Զուբովի համանուն վէպից Բաֆֆիի թարգմանութեամբ։ Ներկայացումը, հակառակ մեր սպասմանց, ընդհանրապէս անցաւ աջող, եթէ ի նկատի ունենանք տյն հանդամանքը, որ մեր դերասանների մեծ մասն այժմ բացւում է գանւում։

Ասղաբաշխի դերը կատարում էր իրան յատուկ տաղանդով մեր ամենատաղանդաւոր դերասան Տէր-Պաւթեանը։ Հարկաւ, նա արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Միւս դերասաններից այդ երեկոյ բաւական

աչքի ընկան պ. պ. Ադայեան և Մանիկոնեան։ Լաւ կըլինէր, որ պ. Ադայեանը մի քիչ իր ձայնն ու առոգանութիւնը բնական դարձնէր, աշխատէր խօսել և ոչ երգել։ Ցանկալի կըլինէր նաև, որ նա ի չարը գործ չըդնէր աչքերի խաղը, նոյնպէս ձեռն այնքան չաճախ չըտանէր ճակատին։ Ընդհանրապէս, պ. Ադայեանն այժմ աւելի լաւ է խաղում, քան մի քանի տարի առաջ։

Միրողներից աչքի ընկան օր. Խիթարեան Սալիհայի դերում և պ. Սուքիասեան Փանահ խանի դերում։ Միւսները չըփչացրին իրանց դերերը։ Մի բան, որ շատ ուրախալի էր—այդ դերերի իմանալն է։ Վերջապէս, մեր դերասանները սկսել են լուրջ ուշադրութիւն դարձնել այս հանգամանքի վրայ։

Արտաքին կողմից ևս ներկայացումը լաւ էր կազմւած, իսկ հագուստները ուղղակի շքեղ էին և համապատասխան Զուբովի վէպի մէջ նկարագրւած ժամանակին։

Թատրոնում բաւական բազմութիւն կար—ապացոյց, որ հասարակութիւնը կարօտել է հայ ներկայացումների։ Պէտք է յուսալ, որ նորակազմ խումբը, խրախուսւելով այս հանգամանքից, կ'աշխատի աւելի լուրջ վերաբերւել իր գործին։

Երկրորդ ներկայացումը կըլինի առաջիկայ չորեքշաբթի, ամսոյս 12-ին։ Կըխաղան Ապահարզան Ծիծաղաշարժ կոմեդիան և Մկնիկ աւելի Ծիծաղաշարժ վոդեւիլը։

ՄԱՀՓՈՅԺ

† Երեմիա Արեպիսկոպոս Գալոստեան

Հայոց հոգեւորականութիւնը եւ մասնաւորապէս Ս. Էջմիածինը զգալի կորուստ ունեցաւ Երեմիա արեպիսկոպոսի մահով, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 3-ին Էջմիածնում։

Երեմիա արքազանը պատկանում է հայ եկեղեցւոյ անշուշտ հոգեւորականների եւ ընդունակ եկեղեցական վարիչների թւին։ Ծնւած (1841) լինելով Վաղարշապատում, սաացաւ տեղական հոգեւոր ուսումնարանում սկզբնական կրթութիւն, բայց շնորհիւ իր ընդունակութեան եւ մեծ բնաւորութեան, վայելում էր ընդհանուրի յարգանքն ու սէրը։ Այդ ընդունակութիւնների շնորհիւ էր, որ նա հասաւ ամենաբարձր ասթիճանին—արեպիսկոպոսութեան, աւագ լուսարարի եւ կաթուղիկոսական տեղակալի պատուոյ ցներին։ Նա պարգեւատրւած էր եւ կառավարութիւնից շատ շնորհներով։

Գէորգ IV եւ Մակար I կաթուղիկոսների օրերում նա խաղացել է նշանաւոր դերեր, եւ երբ Մանկունի եպիսկոպոսը օգտւելով Գէորգ IV-ի թուլութիւնից, ձեռք էր առել Ս. Էջմիածնի դեկը եւ չեր էր մղում արժանաւոր հոգեւորականներին, Երեմիա արքազանն էր, որ հովանաւորում էր հալածւածներին եւ առաջ բաշում արժանաւորներին։ Միեւնոյնը կարելի է ասել եւ Մակար կաթուղիկոսի մահից յետոյ, երբ նա դարձաւ տեղակալ եւ կարճ ժամանակւայ տեղակալութեան օրում ցոյց տւեց իր վարչական շնորհը։ Նա միացած սինոդի անդամ Արիստակէս արեպ. Սեդրակեանի հետ՝ կարճ միջոցում մի շարք բարեփոխութիւններ մտցրեց վանական կառավարութեան մէջ եւ նիւթական միջոցն էլ բարելաւեց։ Երեմիա արքազանի գլխաւոր արժանիքների թւում պէտք է յիշել եւ նրա վանքի բարելաւութեան համար ջանադիր լինելը. իրեւ երկարամեայ լուսարար, բոլոր հանդէսների շնորհքութիւնը եւ վայելչութիւնը նրա կարգադրութեան արդիւնքներն էին։

Նա մինչեւ մահը՝ 30 տարուց աւելի՝ մնաց սինոդի անդամ. բացի դրանից Ս. Հռիփսիմեան վանքի վանահայր էր եւ ձեռնարկել էր նրա վերաշինողութեան։ Նրա տեղակալութեան օրով է տիեզել եւ Էջմիածնի միաբանութեան փառաւոր տիւնութիւնը, որ մի առանձին վեհութիւն է տալիս Մայր-Տաճարին։

Անցեալ տարի Վեհ. Կաթողիկոսի կողմից Արիստակէս արեպիսկոպոսի հետ, ուղարկւած էր Ներկայ գտնելու բազադրութեան հանդէսներին։

Երեմիա արքազանը հեզաբարոյ էր եւ բնաւորութեամբ համակրելի։

Շաբթ[illegible]ի, ամսոյս 5-ին երկարատեւ հիւանդութիւնից յետոյ վախճանւեց մեր տպարանատէր Յովհաննէս Մարտիրոսեանցը։ Հանգուցեալին շատ լաւ ճանաչում են նաեւ մեր գրա՛տանութեան մէջ գործողներից շատերը, ուստի եւ նրա մահը նրանց էլ առանձին վիշտ կըպատճառէ։

Յ. Մարտիրոսեանցը շատ սիրում էր տպարանական արհեստը եւ մի բանի անգամ Եւրոպա ճանապարհորդելով, իր տպարանը կարող եղաւ հասցնել բարեկարգ վիճակի։ Անա դրա շնորհիւ է, որ հանգուցեալի տպագրած հրատարակութիւնները կարող են մրցել մայրաքաղաքներում տպագրւած հրատարակութիւնների հետ։

Հինգշաբթի, հոկտեմբերի 30-ին, համարեա անսպասելի, վախճանւեց Բագւում տեղական Кассій լրագրի խմբագիր եւ կապալառու Սոկոլինսկին։

Վ. Վ. Լեսեւիչի դասախօսութիւնները Թիֆլիսում

Ռուսական գրականութեան մէջ յայտնի Վ. Վ. Լեսեւիչ Թիֆլիսում կարդաց երեք դասախօսութիւն. առաջին դասախօսութեան նիւթն էր՝ Ռոբինզոն Կրուզէ և Ռոբինզոնականները, երկրորդ՝ Չեխիաբեեի նշանակութիւնը Փոլկոռի մէջ և երրորդ՝ Գիտական ուղղութիւնը այժմեան փիլիսոփայութեան մէջ։

Այդ դասախօսութիւններին մեծ հետաքրքրութեամբ յաճախում էր Թիֆլիսի հասարակութիւնը։ Աւելի մօտ մեր կեանքին և շահագրգռող առաջին երկու դասախօսութիւնները էին։ Յարգելի դասախօսի կարծիքով Ռոբինզոն Կրուզեն, ինչպէս իր հեղինակ Դէֆոն է կազմել, չէ կարելի երեխաների ձեռքը տալ եբրև ընթերցանութեան գիրք, այլ նրան պէտք է մշակել, հանել առողջ միջուկը, այսինքն Ռոբինզոնի նախախնամութեան վրայ ունեցած անհամակրելի հայեացքը, անգթութիւնը և անազնիւ վարմունքը դէպի վայրենիները, բոլորովին պէտք է ջնջել և այնպէս առաջարկել մանուկներին։ Այդ ձեւով կազմողների մէջ դասախօսը հաւանեց Աննենսկայա կին գրողինը։

Ինչպէս յայտնի է, հայերիս մէջ կրուզէի, եթէ չենք սխալւում, երեք թարգմանութիւն կայ. հետաքրքիր է իմանալ դրանցից ո՞րն է աւելի յարմար տալ երեխաների ձեռքը։ Եթէ դրանցից և ոչ մէկը բաւարար չէ, ապա ցանկալի կըլինէր, որ Հրատ. Ընկերութիւնը, եթէ ինքը անձեռնհաս է կազմելու, տար գոնէ Աննենսկայայի թարգմանութիւնը։

ԼՈՒՐԵՐ.

—

Վերջերս Թիֆլիսի նահանգապետի ամուսնի՝ Ս. Օ. Բիկովայի նախագահութեամբ կազմակերպւած չանձնաժողովը, որոնց մէջ կան և շատ բարձր դասակարգի տիկնայք, մեծ խնամք են ցոյց տալիս դէպի հայ պաղթականները։ Նրանք այցելում են գաղթականների բնակարանները, անձամբ տեղեկութիւններ ժողովում նրանց վիճակի մասին և ապա անմիջապէս օգնութիւն հասցնում։

—

Քաղաքիս խորհրդարանը առաջադիկայում բացելիք բազմարեստեան (պոլիտեխնիկում) գպրանոց բանալու համար որոշել է բացի 100 հազար ր. քաղաքային միջոցներից նաև տալու 200 դեսեատին քաղաքային դետին։ Այն չանձնաժողովը, որ աշխատում է պոլիտեխնիկում բանալու մասին, չիշեալ դետնի համար որոշել է մօտաւորապէս 500 հազար րուբլի։

—

Տեղական լրագիրները հաղորդում են որ տաճկա-հայաստանից փախած գաղթականները մեծ խմբերով ուղարկւում են Բաթումի վրայով տաճկա-հայաստան։ Մեր հաւաքած տեղեկութիւններից երեւում են, որ հայրենիք գնացողները վերջերս փախածները չեն, այլ շատ տարիներ առաջ աշխատելու համար եկողները, որոնք այժմեան դժւարութիւնով անցագիրներ են ձեռք բերում հայրենիք գնալիս։ Շատ անգամ պատահում է, որ այս գնացողները ճանապարհին թալանւում են, կամ սահմանի վրայ տաճկայ կառավարութիւնը դժւարութիւններ է յարուցանում և սրանք ստիպւած վերադառնում են Ռուսիա։

—

Ռուս. զորձ. նոյեմբերի 3-ին Կ. Պոլսից հետեւեալ հետաքրքիր հեռագիրն է հաղորդում. «Ռուսաց դեսպանութիւնը յայտարարեց Բ. Դրանը, որ եթէ յունական պատերազմական վարձատրութեան մի մասը Տաճկաստանը դիտաւորութիւն ունի գործադրել նոր նաւանոր զինաւորութիւնների համար, այն ժամանակ Ռուսիան կրպահանջէ ռուս տաճկական պատերազմական տուրքի դեռ չվճարւած մասը, այն է 1,300,000 ֆունտ ստերլինգ»։

—

«Кавказъ»-ը հաղորդում է, որ Ալէքսանդրապոլում, հոկտ. 16-ին իր տան առաջ սպանւած (?) է տեղացի հայ հարուստ Քարանեանը։ Այդ լրագիրը չիշեալ լուրը հաղորդելով չի բաւականանում, այլ հեռուն գնալով ասում է. «Ձիշեալ սպանութիւնը կատարել է նոյն նպատակով, ինչ նպատակով որ վերջերումս սպանութեան փորձեր կատարեցին Թիֆլիսի դրամատէրեր Գէորգեանի, Սարգսեանի (Սիրականեանի) և ուրիշների վրայ»։ Եթէ այդպէս է, ուրեմն կարող ենք հանգստացնել պ. Վէլիչկոյին, որ դատարանը վերջիններիս սպանութեան փորձերը քննելով, բոլորովին այլ եզրակացութեան էր եկել և ոչ այն սխալ եզրակացութեան, որի մասին ակնարկում է պ. Վելիչկոն։

—

Ներկայումս Երեւանումն է գտնւում իտալացի երկրաբան Վալին։ Նա եկած է իտալական կառավարութեան կողմից և Սեւանայ լճի վրայ հետազօտութիւններ պէտք է կատարի։

—

Այս տարի լրանում է մեր տաղանդաւոր կոմիկ Գեորգ Տեր-Պետրոսեանի դերասանութեան 25-ամեակը։ Մի խումբ համակրողներ արդէն նախապատրաստութիւններ են տեսնում և մտադիր են հրաւէրներ ուղարկել աշխատաւոր արտիստի 25-ամեայ գործունէութիւնը վայելուչ կերպով տօնելու։

—

Համարեա մի շաբաթ Կովկասը կտւած էր Ռուսիայից եւ լրագիրներ չէին ստացւում մայրաքաղաքներից, ռազմա-վիրական նաւագնացի վրայ տեղացած ձիւների պատճառով։ Նոյեմբերի 1-ին միւս օրը միայն ստացւեց պոստի մի մասը, երեւի միւսներն էլ կը ստացւեն. սակայն այս առաջինը եւ վերջինը չի լինի։

—

Թիֆլիսում նորեկ վախճանւած այրի *Թագուհի Սունդուկեանցը*, **չրնայելով իր վերին աստիճանի հեղ վիճակին, Ներսիսեան Դպրանոցին կտակել է** 500 **ռուբլի։**

—

Մեհեկի բանեցի հայոց եկեղեցու հանգանակ—Кавказъ-ի ասելով—դիմել է Թիֆլիսի հանգանգապետին ամեն տարի, փետրուարի 14-ին, յոյլատրել կատարելու Մեհեկի ս. Վարդան եկեղեցու ձօնը։

—

Որովհետեւ շուտով տեղի է ունենալու արհեստաւորների գլխաւորի ընտրութիւնը, արհեստաւորաց վարչութեան մէջ ընտրում են համքարների ւստադներ։ Մինչեւ այժմ ընտրւած են 28 ւստադներ, եւս պէտք է 20 էլ ընտրեն, որպէս զի արհեստաւորների մեծի ընտրութիւն լինի։

—

Այս տարի լրացաւ վրաց Իւերիա լրագրի խմբագիր իշխան Ի. Ճաւճաւաձէի գրական գործունէութիւն (նա միեւնոյն ժամանակ բանաստեղծ էլ է) 40-ամեակը։ Նրա յօբելեանը տօնելու համար ընտրւած չանձնաժողովը որոշեց հանդէսը կատարել եկող գարնանը. իսկ այդ նպատակով հաւաքւած գումարը (?) գործադրել Ֆոնդ կազմակերպելու կարօտ գրականագէտների համար, մի մասն էլ գրագիտութիւն տարածող ընկերութեան մօտ հնութիւնների մուզէյ (?) հիմնելու համար։

—

Թիֆլիսում գտնւած պաղթականների մէջ բծաւոր տիֆով հիւանդանալու դէպքեր են եղել։

—

Մրցանակ ստացող հայեր

—

Կովկասեան այգեգործական ցուցահանդիսին հետեւեալ հայերն են մրցանակ ստացել. — Հ. Էնգիհաեանցի ժառանգները, որոնք այգիներ ունին Լագոդեխում և Թիֆլիսի նահանգում, ստանում են փոքրիկ ոսկեայ մեդալ, այն հարուստ և ընտիր յատկութեամբ պտուղների համար, որ ներկայացրել են ցուցահանդիսին. Կախեթի գինեգործ Ոհաեաեան Օհաննէս.—մի փոքրիկ արծաթեայ մեդալ ընտիր կարմիր գինու համար. Գեօկչայի գպրոցի տեսուչ Ն. Քալաշեանին փոքրիկ արծաթէ մեդալ շերամապահական օգտակար գործունէութեան համար. Լագօդախի այգեգործ պ. Կ. Ընդիկեանցին արծաթեայ փոքրիկ մեդալ իր այգուց ներկայացրած ընտիր պտուղների համար. Թիֆլիսի գինեվաճառ Մարգար Կիրակոսեանին լաւ գինու համար։ Գովասանական վկայագրեր—Թիֆլիսի այգետէր Ենիկարիեանին, լաւ տանձերի, ծաղկող կաղամբի և բադրջանի համար, Երեւանի նահանգի Թմքուլ գիւղացի Յարութիւն Մուրադեանին ընտիր նռների համար, Բաթումից Հ. Գալաբեկեանին, ճափոնական արմաւի (Dios-

pynes Kaki) համար, Ալէքսանդրապոլից Ր. Տեր Պօղոսեանցին, ընտիր կարմիր գինու համար. Տ. Ն. Ջահիճեանցին՝ շերամի լաւ կոկոնների համար։

Խառն լուրեր

Գնդապետ Վասսոս, որ իր փոքրաթիւ զօրքով կարող եղաւ Կրէտէի իշխանութիւնն իր ձեռքը ձգել և կառավարել, այժմ այնքան լքեալ վիճակի մէջ է իր հայրենիքում, որ ստիպուած է եղել հրաժարական տալ զինուորական ծառայութիւնից։ Այդպէս չէ վերջին յոյն-տաճկական պատերազմի հերոս Սմոլէնեցի բախտը. նա աստիճանով բարձրացաւ, ընտրեցաւ պատերազմական մինիստր։ Նա վերջերս կազմել է բէֆորմների ծրագիր, որով մեծ փոփոխութիւնների է ենթարկւում յոյն զօրքերի կազմակերպութիւնը։ Գէորգ թագաւորն էլ հաւանութիւն է տւել նրա ծրագրին։

—Հռոմում պատրաստութիւններ տեսնում Ֆրանց-Յոզէֆ կայսեր ընդունելութեան համար։ Տեսակցութիւնը Հումբերտ թագաւորի հետ տեղի կունենայ Տուրինում։ Միաժամանակ այնտեղ կըգնայ և Վիլհելմ կայսրը։

—Աւստրիա-Հունգ արևլայում մինչև նախագահ Բադէնը, խռովութիւնների պատճառով, հրաժարական տւեց։ Այժմ Վիեննայից հեռագրում են, որ փոխ-նախագահ Աբրահամովիչը (ազգով հայ է) ընտրել է մինիստր-նախագահ 186 ձայնով 318 ձայնից։

—Ռուս. գործ. կ. Պոլսից նոյեմ. 3-ից հեռագրում է. «Բարոն Կալիցէ արտաքին գործերի մինիստրին (տաճիկ) յանձնեց յայտագիր, որով երբև վարձատրութիւն աւստրիական հպատակների հետ վատ վարելու և աւստրօ-հունգարական հիւպատոսական իշխանութիւնը Սերսինում (Կիլիկիայում) չըյարգելու համար—պահանջում է պաշտօնակ անել Ատանայի վալին, Մերսինի միւթէսարիֆին, այլ և յարգանքի նշան ցոյց տալ, Թնդանօթա ձգութեամբ, աւստրիական դրօշակին Մերսինի նաւահանգստում»։ Տաճիկ իշխանութիւնը բաւարարութիւն տւեց դեսպանին։

—Մալիւմաք լրագրի ասելով Ռումանիայի թագաւորը կըգնայ սոյն նոյեմբերին Կ. Պոլիս և երեք օր Ստամբոլում սուլթանի հիւրը կըլինի, որի հրամանով նրա ընդունելութեան համար մեծ պատրաստութիւններ են տեսնւում։

—Բուլղարիայում մամուլն այնքան ազատ է, որ նոյն իսկ անողոք յարձակումներ է գործում իր իշխանի՝ Ֆերդինանդի վրայ։ Սոամբուլովեանների օրգան Свобода այնպիսի խիստ յարձակումներ էր ուղղել Ֆերդինանդին, որ մինիստրութիւնը կամենում է օրէնսդրութիւն առաջարկել ազգային ժողովին, սահմանափակելու մամուլի ազատութիւնը։

—

ԱՖՈՐԻԶՄՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

—

Կինն իր վիճակի համաձայն պէտք է սովորի ծառայել, որովհետև միայն ծառայելով կարող է վերջապէս ձեռք բերել իշխանութեան իրաւունք, որ տան մէջ լոկապէս նրան է պատկանում։

Գեօթէ

—

Կնոջ խելքն ու քաւարութիւնը մշակած պիտի լինին որքան իր սեպհական նոյնքան և ուրիշների բախտաւորութեան համար։

Սմայլս

—

Ո՛չ թէ խստութիւնը, այլ պարտաճանաչութիւնը պիտի կնոջը պահպանէ։

Մոլիէռ

—

Այն շնորհը, որ կանայք ամեն քայլում ոտքում են՝ կէսն արդէն վաստակած են։

Նոյն

—

Մարդկանց համբերութիւնը չափւում է տարիներով, իսկ կանանցը վայրկեաններով։

N

—

Կինը շատ բան գուշակում, իմանում է շուտ և ուղիղ՝ զգացողութեամբ. նա սխալւում է միայն դատողութիւն անելիս։

Լաւիսիէ

—

Կինը նայում է խորը, մարդն երկար ու մակ։ Մարդու համար աշխարհս սիրտ է, կնոջ համար սիրտը—աշխարհ։

Գրաբբէ

—

Մայրական կոչումը կնոջ ամենալաւ մասն է, որ տրւած է բնութիւնից։

Մախ Նորդաու

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

Աղթիւր-Տարազի հրատարակութեամբ

Ա. Ղ.

ՍԱՓՕ

ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Գինը է 50 կ.

Փախւում է Տարազի գրասենեակում հայ գրավաճառանոցներում։

ОДЕССА.

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ

(9-й годъ изданія).

на общедоступный медицинскій журналъ

„АКУШЕРКА“.

24 №№ въ годъ (въ 12 книжкахъ)

подписная цѣна съ пересылкой

НА ГОДЪ 3 РУБ.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ

1) Въ редакціи журнала «Акушерка» въ Одессѣ.

(адресъ почтп. извѣстенъ).

2) Во всѣхъ книжныхъ магазинахъ.

3) Во всѣхъ почтовыхъ конторахъ съ наложеннымъ платежомъ.

Экземпляры «Акушерки» прежнихъ лѣтъ въ сброшюрованныхъ книгахъ продаются: 1890, 1891, 1892, 1893, 1894 и 1895 г.г. по одному рублю за книгу, 1896 и 1897 г.г. подписывающихся и на 1898 г. по два руб. за экземпляръ, для прочихъ же по три руб. (Всѣ цѣны съ пересылкой).

РУКОВОДИТЕЛЬ ПОВИВАЛЬНОЙ БАБКИ

І-ра

АРТЕМЬЕВА

высылается за 30 коп.

(можно почтовыми марками). Съ требованіями обращаться прямо въ редакцію «Акушерки» въ Одессу.

3—1 Обм.

ԱԼԲՈՄ-ՆԱՄԱՆԱԽ

4 գոյնով տպագրված, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

ԳԻՆԸ 2 ր.

Աղբիւր և Տարազի 96 և 97 թ. բաժանորդների համար 1 ր. 25 կ.

Պիտի՝ Тифлисъ, Агбюро кам Таразъ.

ԱՒԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. Նաւասարդեանցի

(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)։

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

Առաւօտեր՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վի թաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Ֆ. Հիկովանի—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Կին բժիշկ Թուման Էա Բուդենկո-10—11 ժ. կանանց և երես. հ.

Ի. Ֆ. Պռոտասեվիչ 12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկու շաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. Փուղինեան—12—1 ժ. ներ[illegible] հ. երեք [illegible] թի։

Ա Պ. Կարապետեան—1—1½ ժ. Ներքին և երեխայոց հ.

Ե ր ե կ ո ց ե ր ը՝

Պռոտասեվիչ—5—6 ժ երեքշ. հինգշ. և շաբաթ.

Ա. Մ. Փուղինեան—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Ֆ. Թուրկո—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. Ներքին և մորթի հ.

Ա. Ֆ. Թուրկո քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէզի, խոխ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիո մի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան

Լոյս տեսաւ

ՁԻՐՎԱՆԶԱՏԻՒ

«ՁԱՅԳԱՆ»

վէպը

Գինն է 50 կոպ.

Պիտի՝

Тифлисъ, *Ширванзадѣ*.

ԲԺԻՇԿ Տ. Պ. ԼԱԶԱՐԵԱՆ

Նախկին ասիստէնտ Մոսկուայի քաղաքային մանկական հիւանդանոցի յանուն Ս. Վլադիմիրի։

Բժշկում է ԵՐԵԽԱՆԵՐԻ հիւանդութիւններ առաւօտը 10—12 ժամը. և երեկոյեան 5—6 ժամը։ Սոլոլակ Սադովայա փ., տ. Քալանթարովի № 50.

5—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ НА ЖУРНАЛЪ

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

НОВЬ

XIV ГОДЪ ИЗДАНІЯ 1898 г.

иллюстрированный двухнедѣльный вѣстникъ современной жизни политики, литературы, науки, искусства и прикладныхъ знаній.

за 14 рублей

безъ всякой доплаты за пересылку премій, *подписчики «НОВИ»* получаютъ въ 1898 году, съ доставкою и пересылкою во всѣ мѣста Россійской Имперіи, слѣдующей шесть изданій.

1). ЖУРНАЛЪ **НОВЬ** 24 выпуска въ форматѣ наибольшихъ европейскихъ иллюстрацій.	2) особый иллюстрированный отдѣлъ **МОЗАИКА** (24 выпуска) составляющій какъ бы самостоятельный журналъ по прикладнымъ знаніямъ, вмѣщающій въ себѣ 16 рубрикъ.	3) журналъ ЛИТЕРАТУРНЫЕ СЕМЕЙНЫЕ **ВЕЧЕРА** (отдѣлъ для семейн. чтенія) 12 ежемѣсячныхъ книжекъ романовъ и повѣстей.
4) **ВОСЕМЬ** переплетенныхъ томовъ полнаго собранія сочиненій П. И. МЕЛЬНИКОВА. (Андрея Печерскаго)	5) **ЧЕТЫРЕ** переплетенные тома полнаго собранія сочиненій **ВЛ. ИВ. ДАЛЯ** (Казака Луганскаго)	6) **ДВѢ РОСКОШНО** переплетенныя книги формата in-folio, *„Живописной Россіи“*, посвященныя описанію **МОСКВЫ** и Москов. промышлен. обл.

XIV (1898) ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ СЪ 1 НОЯБРЯ 1897 Г.

ГОДОВАЯ ПОДПИСНАЯ ЦѢНА за всѣ вышеобъявленныя изданія вмѣстѣ съ пересылкою во всѣ мѣста Россійской Имперіи, безъ всякой доплаты за перес. и дост. безплатныхъ премій. За границу—24 рубля. **14 РУБ.**

Разсрочка платежи допускается, при чемъ при подпискѣ должно быть внесено не менѣе 2 руб.; остальныя же деньги могутъ высылаться по усмотрѣнію подписчика ежемѣсячно, до уплаты всѣхъ 14 руб. При подпискѣ въ разсрочку безплатныя преміи высылаются только по уплатѣ всей подписной суммы.

КЪ СВѢДѢНІЮ Г.Г. НОВЫХЪ ПОДПИСЧИКОВЪ НЕ ПОЛУЧАВШИХЪ **«НОВИ» въ 1897 году.**

Лица, не состоявшія подписчиками «НОВИ» въ 1897 году и неимѣющія еще первой половины СОЧИНЕНІЙ АНДРЕЯ ПЕЧЕРСКАГО и первой половины СОЧИНЕНІЙ В. И. ДАЛЯ, могутъ, подписываясь на «НОВЬ» въ 1898 году, получить первые шесть томовъ (т. е. томы по 6) сочиненій А. Печерскаго и первые шесть томовъ (т. е. томы 1 по 6) сочиненій В. И. Даля, вмѣсто томовъ, выдаваемыхъ въ 1898 году прежнимъ подписчикамъ. Вторая же половина сочиненій, какъ А. Печерскаго, такъ и В. И. Даля, будетъ выдана этимъ новымъ подписчикамъ въ 1899 году, въ чемъ редакція теперь же и принимаетъ передъ ними обязательство.

Новые подписчики на «НОВЬ» 1898 года, т. е. лица не бывшія подписчиками на журналъ въ минувшемъ 1897 г., при уплатѣ за 1898 г. 26-ти рублей, вмѣсто 14-ти руб., могутъ получить въ 1898 г. **всѣ 14 томовъ полнаго собранія сочиненій Андрея Печерскаго и всѣ 10 томовъ полнаго собранія сочиненій В. И. Даля.**

а также и тѣ двѣ переплетенныя книги „Живописной Россіи“, которыя выдавались подписчикамъ въ 1897 г.; значитъ, вмѣсто 2 книгъ „Живописной Россіи“ они получатъ 4 переп. книги этого изд. и, 12 т. соч. А. Печерскаго и В. И. Даля, 24 т.

Подписка принимается исключительно въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. Вольфъ, въ С.-Петербургѣ, Гостинный Дворъ, 18; въ Москвѣ—Кузнецкій мостъ, № 12, и въ редакціи «НОВИ», въ С.-Петербургѣ, Васильевскій остр., 16 лин., собств. домъ, № 5—7.

Обм. 1—4

Дозв. ценз. Тифлисъ, 8 ноября 1897 г. Տպարան Ս. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2.